

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

10.05.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Ն.Ասրյանը, Ա.Մխիթարյան, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղոյանը, Հ.Հակոբյանը, Ա.Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք

- Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լևոն Տեր-Սիմոնյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բեջանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

1 շաբաթյա ժամկետում կազմակերպել քննարկումներ ցածր հավաքագրումներ ունեցող համայնքների ղեկավարների հետ և անհրաժեշտ հսկողություն սահմանել հավաքագրման մակարդակի բարձրացման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝

3-օրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություններ պաշտոնավարման ժամանակաշրջանում ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

ա) Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել օգոստոս ամսին նախատեսված «Հայաստան» համահայկական խաղերի» կազմակերպման և անցկացման ուղղությամբ:


բ) Դիմել համայնքների ղեկավարներին միջոցներ ձեռնարկելու ՀՈԱԿ-ների տնօրենների հետ կնքված (կենսաթոշակային տարիքի հետ կապված) պայմանագրերի վերանայման ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Վանաձորի համայնքապետի հետ համատեղ աշխատանքներ տանել համայնքի կիսակառույցների գույքագրման, դրանց ֆինանսական գնահատման նպատակով և ներկայացնել տեղեկատվություն մինչև 16.05.2019թ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն ռիսկային համարվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:

 Invalid signature



ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ